

# Անկյունագծային գումար

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան  
Հիշողության սահմանափակում՝ 256 MB  
Կշիռը՝ 100 միավոր

## Շարադրանք

Քառակուսի մատրիցի անկյունագծային գումար կանվանենք գլխավոր և երկրորդական անկյունագծերի տարրերի գումարը: Տրված է  $N \times N$  չափի ամբողջ թվերից կազմած քառակուսի մատրից: Հարկավոր է հաշվել այդ մատրիցի մեջ ընկած ամենամեծ անկյունագծային գումար ունեցող ենթամատրիցը: Պետք է տպել այդ գումարը:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է մատրիցի  $N$  ( $1 \leq N \leq 400$ ) չափը: Հաջորդ  $N$  տողերից յուրաքանչյուրում տրված են  $[-10000, 10000]$  միջակայքի  $N$  ամբողջ թվեր:

## Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ մեծագույն անկյունագծային գումարը:

## Օրինակ

Մուտք	Ելք
2 3 -1 4 6	12
4 0 -1 -2 -13 5 0 6 -2 0 -1 0 -1 0 0 7 0	17

## Ենթախնդիրներ

- Ենթախնդիր 0 (0 միավոր) Օրինակները,
- Ենթախնդիր 1 (5 միավոր) բոլոր թվերը դրական են,  $N \leq 100$ ,
- Ենթախնդիր 2 (5 միավոր) բոլոր թվերը բացասական են,  $N \leq 100$ ,
- Ենթախնդիր 3 (40 միավոր)  $N \leq 100$ ,
- Ենթախնդիր 4 (50 միավոր)  $N \leq 400$ :